



# BAKER TILLY ARMENIA

22 Hanrapetutyán Street  
Area 16, 5<sup>th</sup> floor  
0010 Yerevan  
Republic of Armenia  
Tel: +374(10) 544-301  
Tel: +374(10) 544-307  
Tel: +374(10) 544-309  
Fax: +374(10) 562-404  
Email: [info@bakertillyarmenia.com](mailto:info@bakertillyarmenia.com)  
[www.bakertillyarmenia.com](http://www.bakertillyarmenia.com)

15.04.2016  
N 011604

## ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն

*[Handwritten signature]*  
Փ. Պարզյան

Ստորագրական ծառայությունների իրականացման  
լիցենզիա թիվ 054, տրված 22 ֆինանսների  
և էկոնոմիկայի նախարարության կողմից



## ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ֆիդես Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ  
Բաժնետիրոջը

Մենք առդիտի ենք ենթարկել «Ֆիդես Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ -ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2015թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

### Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար պատասխանատու է տնօրինությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա կարծիք արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտների համաձայն: Այս ստանդարտներով պահանջվում է, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են բոլոր էական առումներով ճշմարիտ և իրական պատկերը 2015թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համաձայն Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Աուդիտոր

Ա. Դավթյան



15.04.2016թ.